

Սուրեն Հաբուրյունյան

ՎՐԱՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ*

Իժմար խնդիր է մի զեկուցման նեղ սահմաններում ներկայացնել վրաց սովետական պոեզիայի պատկերը: Երկրի զարգացման էտապներն արտացոլող և վրաց ժողովրդի հոգևոր կյանքի դրսևորումներով հարուստ վրացական պոեզիան, կոփվել և արիացել է իդեոլոգիայի ընագավառում մղվող անհաշտ պայքարում, որպես բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային վրաց կուլտուրայի մի հատվածը: Այդ պոեզիան զարգացել է սերտ կերպով կապված ուսսական սովետական պոեզիայի հետ, սնվելով իր սեփական հայրենական ակունքներից ու անգրկովկասյան ժողովուրդների կուլտուրայի անցյալ և նորագույն տրագիդիաներից: Իր առանձնահատկություններով և ժողովրդային ինքնատիպությամբ, սոցիալիստական բովանդակության իր բազմադունեղ արտահայտություններով, վրաց պոեզիան, սովետական պոեզիական կուլտուրայի ուժեղ ջոկատներից մեկն է: Ռեոլուցիոն, սովետական պոետների ավագ սերնդի, մեր տարիներին աճած նոր բանաստեղծները ու ժամանակակից երիտասարդ պոեզիայի տաղանդների. սովար թիվը պերճախոս ապացույցն է այն ճշմարտության, որ միայն սովետական իրավակարգում լիապես բացահայտվեցին, վրաց ժողովրդի ստեղծագործական հնարավորությունները և միայն մեր էպոխայում ամբողջ ձայնով հնչեց վրաց բանաստեղծ-ժողովրդի պատկերավոր խոսքը:

Այդ խոսքի խոշորագույն վարպետներից, վրաց սովետական պոեզիայի հիմնադիր գեմքերից մեկն է համաժողովրդական հարգանքի արժանացած Գալակտիոն Տաբիձեն: Չենք խոսում նրա անցյալ ստեղծագործական հակասական ուղիների մասին: Փաստ է, որ Գալակտիոն Տաբիձեն հանդիսանում է ուեոլուցիայի պոետը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուեոլուցիայի բերած համաշխարհային-պատմական վերափոխումների երգիչը: Դեռ 1917 թվականին Տաբիձեն երգում է ազատությունը, ողջունում ուեոլուցիայի մարտիկներին ու նրա դրոշը:

Слава борцам, за свободу замученным,
Павшим в боях! Победившим в боях!
Ставшим, как звезды, в наших краях!
Шумите, знамена!

Բանաստեղծի ընդգրկումները լայն են. նա տեսնում է էպոխան և երգում Վրաստանը նոր դարաշրջանի մեջ: Տաբիձեի առնական ձայնը, խո-

* Զեկուցված է Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովում, նվիրված Սովետական Վրաստանի 31-րդ տարեդարձին:

բապետ վերապրած զգացմունքների պոետական նրա հուժկու թռիչքները տալիս էին Վրաստանի վերածննդի ավետիքը.

О, как желаю я сильней расправить крылья!
Возможно ли в такое время думать,
Что нашей Грузии не даст красы и силы
Век революции, век долгожданный?¹

Այս՝ 1917 թվականին էր:

Գալակտիոն Տարիձեի պոեզիան վրաց բանաստեղծների առաջ գրեց ունուցիչի մեծ պոետ Վլադիմիր Մայակովսկու ստեղծագործական սկզբունքները յուրացնելու հարցը:

Վրացական չափածո գրականության մեջ ուժեղ շերտավորում էր կատարվում. Տարիձեի միջոցով Մայակովսկու պոետական նորարարությունը ջրբաժան կետ էր մտցնում մոտակա անցյալի՝ վրաց դեկադենտական, բուրժուա-ազնվական ոեակցիոն հոսանքի և նոր՝ ունուցիոն հոսանքի միջև: Հաղթանակում է նորը և Տարիձեն իր տողերին տալիս է նոր բովանդակություն, նոր ուժ, նոր պատկերներ, ջարդում վատթարագույն տրագիկաները, բարձրացնում գեմոկրատական-ազգային պոեզիայի ժառանգությունը, օրգանապես, հարազատորեն արտացոլում ունուցիոն շինարարության դարաշրջանը թևակոխած ժողովրդի թարմ ու օպտիմիստական կենսահաստատ աշխարհազգացողությունը: Բանաստեղծն ասում է.

Народу верен будь всегда,
Пусть шаг твой будет твердым в жизни!
Талантов всех сильней, властей—
Талант служения Отчизне!²

Գալակտիոն Տարիձեն սովետական բազմալեզու պոեզիայի մեջ առաջիններից է, որ երգում է ունուցիչի մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի փառքը: Բանաստեղծի այդ ոտանավորները գրված են Լենինի մահվան առթիվ, բայց դրանց մեջ հանճարեղ ուսուցչի անմահ գործի հաղթանակն է երգում պոետը.

Мысль Ленина, мысль исполина,
Весь мир зажегшая собой, ,
Увидит цель осуществленной,
В стране, где счастлив труд людской.

И клятва Сталина—порукой,
Что будет полным торжество!
Вот—лучшие сыны Отчизны
Уже сплотились вокруг него...³

Այս՝ 1924 թվականին էր:

Ահա այսպես, վրաց սովետական պոեզիայի մեջ սկիզբ է առնում, ապա

¹ Галактион Табидзе. Избранные стихи, перевод с грузинского, ГИХЛ, Москва, 1950, стр. 12.

² Նույն տեղում, էջ 19:

³ Նույն տեղում, էջ 22:

և խորանում ուղղության, նրա առաջնորդների պատկերման ու փառքի երգի բարձր տրագիգիան, որը մեր օրերում չափածո մի ամբողջ գրականության ծնունդ է տալիս:

Գալակտիոն Տարիձեի էպոխային ընդգրկումների պատկերավոր մտածողությունը արստրակտ չէ: Պոետական համեմատությունների և պատկերների նյութ հանդիսացող մեծ կյանքը՝ իր մեծ երևույթներով, բանաստեղծի մոտ շատ հաճախ կոնկրետ նկարագիր ունի: Էպոխայի մեջ նա տեսնում է կոնկրետ դեպքեր, իր շրջապատը, նոր Թբիլիսին ու Բաթումին, նոր Արխագիան, Հայրենական պատերազմի մարտիկներին: Ահա ինչու նա՝ հավատարիմ խոշոր ընդհանրացումների իր քնարին, կոնկրետից վերադառնում է էպոխային և իմաստավորում բանաստեղծի դերը:

Я поднимался выше по ступеням
идей, рожденных нашей эпохой,
я творчеством народа вдохновлялся
и честной песней вдохновлял народ!

- И звание народного поэта
за то мне стало счастьем величайшим,
что лира — Революции служила,
была моей винтовкой боевой.

Народ мой! Я твоей любовью взыскан
за то, что выражал твои надежды,
и волю, и могучее стремление,
что в октябре был сыном Октября!¹.

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուղղության թեման վրաց պոեզիային իդեոլոգիական անընդգրկելի հարստություն է հաղորդել: Այդ թեմայի մշակումը Սովետական Միության բոլոր ժողովուրդների գեղարվեստական ստեղծագործության որակական նոր աստիճանի ամենաակնառու վկայությունն է: Նույնը պետք է ասել վրաց պոեզիայի կապակցությամբ, ուր ուղղության քնարական գովքը բերել է իր հետ երկրի ու ժողովրդի վերածննդի պատկերումը, ուղղության առաջնորդների գործունեության իմաստավորումը ժողովուրդների կյանքում, ժողովուրդների անքակտելի բարեկամության, խաղաղության ու սոցիալիզմի համար մղվող պայքարի դրսևորումը, Հոկտեմբերի՝ համաշխարհային-պատմական դերի ու նշանակության գիտակցումը, կոմունիզմի կառուցման երգը:

Գալակտիոն Տարիձեի պոեզիայում Հոկտեմբերյան ուղղության թեման արդեն իսկ բացահայտվում է գաղափարական վերոհիշյալ հարստությամբ և նրանից անցնում Գեորգի Լեոնիձեին: Հետագայում այդ թեման դարձավ նախասովետական շրջանից սովետական գրականության դիրքերն անցած հին վարպետների՝ Իոսեբ Գրիշաշվիլու, Ալեքսանդրե Արաշելու, Սանդրո Շանշիաշվիլու, նոր վարպետներ՝ Իրակլի Արաշիձեի, Գրիգոր Արաշիձեի ու ամբողջ երիտասարդ պոետների ստեղծագործության հիմնական մոտիվներից մեկը:

¹ Галактион Табидзе, Избранные стихи, перевод с грузинского, ГИХЛ, Москва, 1950, стр. 186.

Արդի վրաց պոեզիայի բազմազունեղ արտահայտությունների մեջ մենք գտնում ենք ուկրաինացի գաղափարների անընդմեջ զարգացման ու խորացման դրսևորումը:

Սովետական Միության գրական հասարակայնության կողմից որպես ժամանակակից վրաց պոեզիայի ականավոր դեմք ճանաչված Գեորգի Լեոնիձեն եկավ հաստատելու, որ Հոկտեմբերյան ուկրաինացի լայն հնարավորություն է տվել վրաց ժողովրդի ստեղծագործական տաղանդի ծաղկմանը և ուղղել այն՝ նոր կյանքի կառուցման ճանապարհով:

Հենց նորերս լույս տեսավ Լեոնիձեի երկերի ստվարածավալ հատորը, նրա բանաստեղծությունների և պոեմների նոր հրատարակությունը: Գիրքը կազմված է հետևյալ հիմնական բաժիններից՝ «Բանաստեղծություններ Ստալինի մասին» և «Ստալին. մանկություն և պատանեկություն» էպոպեն, «Եղբայրական ընտանիքում» բաժինը, «Կարթլիս Յիսովերա» բաժինը, «Քնարական», «Պատերազմի մասին», «Աշխատանքի և խաղաղության մասին», «Հունգարական ոտանավորներ» բաժինները: Կաղաքացիական բարձր պաթոսի, հույզերի և պատկերների խտացման խոշոր պոետ Լեոնիձեն Գալակտիոն Տաբիձեի լայն ընդգրկումների հատկությունը յոգադործում է իր սեփական պոետական ձայնը հնչեցնելու մեր ժամանակի հիմնական երևույթների դրսևորման իր ինքնատիպ արվեստում:

Գ. Լեոնիձեի պոեզիայի կենտրոնական թեման և կենտրոնական կերպարը՝ Առաջնորդի կերպարն է: Այստեղ է, որ ամենից ավելի խորը և բազմակողմանիորեն է դրսևորվում բանաստեղծի տաղանդը, նրա վարպետությունը, պոետական մտածողության լայն մասշտաբը: Ստալինի կերպարի գեղարվեստական պատկերումով Լեոնիձեն Վրաստանի պոետների մեջ ճանաչված է առաջատար դեմք: Առաջնորդին նվիրված գրականություն մեջ պոետների մի մեծ խումբ հանդես է գալիս բազմաթիվ երկերով: Տաբիձեից Լեոնիձե, Արաշելուց Գրիշաշվիլի, Իրակլի և Գրիգոր Արաշիձեներ, Նոնեշվիլի, Սիմոն Ջեքովանի և այլ խոշոր թիվ կազմող բանաստեղծներ տվել են ուշագրավ և սովետական պոեզիան հարըստացնող գործեր, որոնք Ստալինի կերպարը պատկերում են նրա մանկապատանեկական տարիներից սկսած մինչև մեր օրերը: Լեոնիձեն էպիկական ժանրով մշակեց իր թեման, ցույց տալով այն միջավայրի, իրականության, դասակարգային այն մարտերի պատկերը, որ մղել է վրաց ժողովուրդը և որտեղ հզորացել է երիտասարդ Ստալինի միտքն ու կամքը՝ ապագա ավելի մեծ մասշտաբի պայքարներում ուկրաինացի հաղթանակն ապահովելու համար:

Հետևելով Մայակովսկու տրագիկային, ունենալով Մայակովսկու «Վլադիմիր Բլյիշ Լենին» պսեմի օրինակը, Լեոնիձեն «Ստալին» էպոպեում Ստալինի կերպարի կերտման նախապատրաստությունը ևս դիտում է պատմական լայն ֆոնի վրա, Խուսափում ծավալված ուկրաինացի շարժումների ֆոնի վրա, ապա և երգում այն, թե Քարթլիում ինչպես էր բարձրանում ազատության նոր արևը՝ երիտասարդ Ստալինը: Ահա այդ հատվածը.

В те дни в России необъятной
Сердца борцов во льдах пылали,
Когда во славу весен солнечных
Дворец царей они взрывали.

Вставала Картли, сны забывшая,
И много в потрясенном мире
У ней сынов, грозе подобных,
И много среди вьюг Сибири,
Чей слился голос с гулом русским,
Как реки в океанской шири.

И жизнь героев новых возвещала,
И был герой предтечею героя.
Там, где страна орлиная вмещала
Бсю пестрядь гор и с них глядела в море,
Там и рождался очага живого
Тот ореол, простой и человечный,
Что, как предтеча огненного слова,
Светил над миром в мира темный вечер¹.

Ստալինի կերպարը Լեոնիդի պոեզիայի մեջ հանդես է գալիս առաջնորդի կյանքի ու գործունեության հետագա շրջանների պատկերումով ևս: Բնորոշ են բանաստեղծ Դեորգի Լեոնիդի՝ Սովետների Համամիութենական 8-րդ արտակարգ համագումարում արտասանած «ճառ-ոտանավորը» և նույն համագումարի դեկզատ Լեոնիդի «Հիշողություններ» ոտանավորը: Ստալինյան Կոնստիտուցիային, հաղթանակած սոցիալիզմին նվիրված այդ երկերում Լեոնիդեն Ստալինի կերպարը ներկայացնում է Լենինի, մեր մեծ երկրի ժողովուրդների եղբայրության մոտիվների համընդհանուր արտահայտություն:

Վրաց սովետական պոեզիայի մեջ Լենինը և Ստալինը հանդես են գալիս իրրև վրաց ժողովրդի և Վրաստանի վերածնունդը ոգեշնչողներ: Վրաց պոետները հարազատ ժողովրդի ապրած նոր դարաշրջանը և ազգային վերածնունդը դիտում են որպես Լենինյան իդեաների հաղթանակի մեծագույն արդյունք: Լեոնիդի, Արաշելու, Արաշիձեների, Նոնեշվիլու և այլ բանաստեղծների գրքերում մենք գտնում ենք ստեղծագործություններ՝ նվիրված Լենինին: Այդ բանաստեղծություններում Լենինի գաղափարների և Լենինի հետ է կապվում Վրաստանի վերածնունդը: Հաճախ նույն այս թեման կոնկրետանում է, իրրև բոլշևիկների պարտիայի թեմա, որը վրաց պոեզիայի ստեղծագործական բնագավառներից մեկն է: Իրակլի Արաշիձեի՝ 1951 թվականին լույս տեսած «Հատընտիր» վրացերեն հատորում զետեղված «Վրաստանի կոմպարտիային» բանաստեղծության մեջ պոետը պատմում է Վրաստանի կոմունիստական պարտիայի գործունեության արդյունքների մասին երկրի ու ժողովրդի կյանքում: Հարցերի մի հարուստ գումար

¹ Георгий Леонидзе. Стихотворения и поэмы, перевод с грузинского, Москва, ГИХЛ, 1951, редакция и примечания В. В. Гольцева, էջ 200—201, հատվածը բերված է ն. Տիխոնովի թարգմանությամբ—Ս. Հ.:

է վերցնում բանաստեղծը, արտահայտելով ժողովրդի նվիրական զգացմունքներն ու վերաբերմունքը բողջեիկների պարտիայի նկատմամբ, պարտիա, որը նոր կյանքի է կոչել վրաց ժողովրդին, վերափոխել է երկրի դեմքը և այդ տասնամյակներում դարերի ճանապարհ է անցել, հասել երջանկության գագաթները, որը պահպանել ու հարստացրել է ժողովրդի լեզուն, նրա կուլտուրայի լավագույն տրադիցիաները:

Լենինի և Ստալինի կերպարների վարպետ պատկերումը վրաց պոեզիան վաղուց է ինչ դուրս է բերել ազգային շրջանակներից, իդեական հզորություն է հաղորդել նրան, հասցրել նրան զարգացման բարձր աստիճանի:

* * *

Ուրախությամբ մենք ուզում ենք նշել վրաց ժամանակակից պոեզիայի մի հատկությունը ևս: Դա՝ նրա պատկերավոր մտածողության կոնկրետությունն է, իրավացի փախուստը անհոգ արստրալիցիաներից դեպի կյանք, դեպի այն ամեն մեծն ու փոքրը, որը նյութականացնում է մեր դադափարները իրական, կոնկրետ փաստերի մեջ: Իրականության կոնկրետ պատկերումը պոետական մտքի շատ լարված աշխատանքի արդյունք է: Վրաց պոեզիայում գնալով ավելի խորն է կիրառվում սոցիալիստական ռեալիզմի մեթոդը: Բլենք՝ բանաստեղծները հայացքները ուղղել են կյանքի վրա և այստեղ են փնտրում ոգևորության աղբյուրը: Պակաս կարևոր նշանակություն չունի այս երևույթը և այն առումով, թե ինչ է կատարվել անցյալում ապրած պոետների գեղարվեստական ստեղծագործության հետ, երբ տրադիցիոն կերպով տիրապետած պատկերներն ու պոետական ատաղձը գերազանցապես բնապատկերներ են եղել, վարդեր ու աստղեր:

Այժմ, սոցիալիստական իրականության հզոր ներգործությամբ, հեղաշրջվում է բանաստեղծական խոսքի ֆունկցիան՝ գործադրվում է հողի, ընդերքի, աշխատանքի, մարդու, երկրի, քաղաքի, գյուղի կոնկրետ արտացոլման նպատակով:

Վրաց ժամանակակից պոեզիայում, անցյալի պոեզիայի պարզության ու ժողովրդայնության, ինչպես նաև պատկերային համեմատությունների լավազույն տրադիցիաներն օգտագործելու, ազգային երանգը պահպանելու հետ միասին, այժմ, առաջնայինը համարելով սոցիալիստական բովանդակությունը, պոետական պատկերների ատաղձն ու ոգին քաղվում է և վերցվում նոր իրականությունից, նոր մարդու հոգեկան աշխարհում իր հարուստ արտացոլումը գտած իրական կյանքի զգացողություններից ու վերապրումներից: Կոնկրետը վրաց պոեզիայում հյուսվում է ընդհանուրին, փաստը իմաստ է ստանում ընդհանուրի շղթայի մեջ: Այս տեսակետից բնորոշ է Իոսեր Գրիշաշվիլու պոեզիան, մի բանաստեղծի, որը եկել է անցյալից, հեռացել անցյալի սուրեկտիվիստական մոտիվներից ու հենվելով իր պոեզիայի հասարակական-սոցիալական մոտիվների վրա, սովետական տարիներին ջերմորեն երգել և երգում է նորը: Գրիշաշվիլուն հատուկ է հենց այս գիծը՝ կոնկրետի ներհյուսումն ընդհանուրին և առանձնակի վերացրած փաստերի տիպականացումը: Գրիշաշվիլին վերածնված Վրաստանի տարեգիր-բանաստեղծն է: «Պատմաբանին» բանաստեղծության մեջ նա ասում է.

Историк, ты воспел былое,
но пылью хроник не кичись!
Смотри, вокруг тебя герои,—
пред их величием преклонись!

Мы высоко возносим знамя,
страна трудом обновлена.
Здесь каждый холм и каждый камень
хранят героев имена.

Геройский век! Не ступишь шагу,
не видя взлета новых сил!
Людей сегодняшних отвагу
ты в книги внес? Ты изучил?

Ապրել միայն անցյալով,—ասում է պոետը,—դա չար ճակատագիր է: Ահա նրա մեկ այլ ոտանավորը՝ «Բերիայի անվան հրապարակը»: Թվում է, թե դժվար է մասնավոր երևույթի վրա կառուցել խոշոր ընդհանրացումներ: Բայց Գրիշաշվիլին գնում է այդ ճանապարհով: Չկա հին, արհիւնների հրապարակը, չկա ոչ ոնք. որ հին է, արմատապես վերափոխվել է Թրիլիսին, նրա հետ վերափոխվել է երկիրը: Վրաստանը ներկայացվում է որպես թանկագին ապարանջան և նրա մեջ շողշողուն ազամանդը՝ նոր Թրիլիսին:—Այսպես է երգում բանաստեղծն իր նյութը, որը սկզբում քաղաքի հրապարակն է և ապա դառնում է մայրաքաղաքի ու ողջ երկրի գովք:

Կենդանի պոետական խոսքը և կոնկրետի ու առօրյականի մեջ բանաստեղծական գյուտեր բացելու կարողությունը Գրիշաշվիլուն դարձնում են վրաց ժողովրդի ազգային վերածննդի երգիչ, վերածնունդ, որը կատարվել է պատմական նոր բովանդակության հիմքի վրա՝ սոցիալիզմի հիմքի վրա: Ահա այս օրգանական կապն իրականության հետ, սերը դեպի վերափոխվող բնությունը և նրա արարիչը հանդիսացող նոր մարդը բարոյական մեծ ուժի լիցք է տալիս բանաստեղծին և կերտում նրա հայրենասիրական կերպարը: «Բնքս ինձ» քառյակում Գրիշաշվիլին իրավունք ունի ասել, որ ծառայում է չքնաղ հայրենիքին և ամեն օր իրեն հարց է տալիս,—այսօր ի՞նչ է արել նրա համար:

Пиши стихи, песнь звонкую любя,
ценя апрель, июнь, пришедший в срок,
но каждым утром спрашивай себя:
„Чем Родине сегодня ты помог“?

Նոր Թրիլիսին երգել են և երգում են վրաց սովետական բոլոր պոետները: Ուժեղ կոլորիտի, ընդգծված բարձրերի ու տրագիկականների այդ քաղաքը միայն սովետական տարիներին հրաժեշտ տվեց իր դժբախտություններին ու սոցիալական հակասություններին և հառնեց, իբրև նորոգ երկրի սիրտը և երջանկության օրրան: Անցավ նրա չարչիական ու

¹ И. Гришашвили, Стихи, изд. „Правда“, Москва, Библиотека „Огонек“, № 21, 1951, стр. 21.

² Նույն տեղում, էջ 34:

համաքարական կյանքի պատկերը, նա դարձավ ամբողջ ժողովրդի փառքի ու վերածննդի բանականության կենտրոնը: Լավ է ասել Գրիշաշվիլին.

Здесь пляски, чехарда, амкары,
адаты отошедших дней
забыты вместе с былью старой,—
и мне расстаться надо с ней!¹

Զգալի նվաճումներ ունի արդի վրաց վիպերգությունը: Այդ նվաճումների թվին են պատկանում Գ. Լեոնիձեի «Բերշոուլա» և «Փորթոխալա» պոեմները: 1951 թվականին այդ պոեմների հեղինակը նույնպես արժանացավ Ստալինյան մրցանակի: Վրաց աշխատավոր ժողովրդի երկու ներկայացուցիչներին է պատկերել հեղինակը՝ ծերունի քաղաքական Բերոյին և գեղջկուհի Փորթոխալային: «Հասարակ» մարդկանց կենսագրության գեղարվեստական արտացոլմամբ հեղինակը ցույց է տալիս վրաց ժողովրդի դառն անցյալը՝ միապետության և սեփական շահագործողների լծի տակ: Բերոն, սակայն, պայքարել է այդ լծի դեմ, իր պայքարով մարմնավորելով վրաց աշխատավորների դասակարգային զայրույթն ու ատելությունը՝ ընդդեմ ժողովրդի թշնամիների: Բնության հրաշալի ծնունդ է Փորթոխալան: Բզուր չէ, որ հեղինակն իր հերոսուհու կերպարի հետ է կապում Վրաստանի սքանչելի բնության մեր պատկերացումները և, միաժամանակ, պատմում, թե դարերի ընթացքում ինչպես է դաժանորեն շահագործվել ժողովուրդը: Երկու պոեմներն էլ հագեցած են հաղթանակի տրամադրությամբ: Առհավետ փրկված է ժողովուրդը. նա վերածնվել է, իրականացրել իր դարավոր երազանքները՝ Լեօնիկ կյանք ստեղծելու մասին: Պոեմներում Ստալինը հանդես է գալիս իբրև ժողովուրդների փրկարար, իբրև Բերոյի և Փորթոխալայի նոր սերունդների բերկրալի կյանքի դարբին: Վրաստանը, նոր, սոցիալիստական Վրաստանը չափազանց հարուստ, բերկրալի պատկեր է ներկայացնում պոետների համար: Այն սովետական ռեսպուբլիկաների եղբայրական ընտանիքում արմատապես վերափոխվել է և ապրում է աննախընթաց զարգացում:

Նրա էլիկտրա-արդյունաբերությունը վերին աստիճանի ազդատիկ էր. այժմ — նա էլեկտրա-արտադրության ու էլեկտրա-տնտեսության առաջավոր երկիր է. նա ավտո-արդյունաբերություն չունի. այժմ նա ավտո-արդյունաբերություն ունի. նա ծանր մեքենաշինություն չունի. այժմ ունի ժողովրդական տնտեսության պահանջները բավարարող հայրենական մեքենաշինություն: Երկիրը պատված է երկաթուղիներով, որոնք մեծ մասամբ էլեկտրիֆիկացված են: Վրաստանը արդյունաբերական խոշոր կենտրոններ ու քաղաքներ ստեղծեց, որոնց թվում մետաղաձուլական՝ Ռուսթավի քաղաքը: Երկիրը ծանր ու թեթև արդյունաբերության բազմաթիվ ճյուղերով զարգացած առաջավոր ռեսպուբլիկա է:

Իսկ դրոշմը՝ Վրաց յլասիկ գրականությունը հարուստ է նրա անցյալի տղեկտուր կյանքի պատկերներով: Ճավճավաձե, Ղազրեգի, Նինոշվիլի և շատեր՝ թողել են վրաց գյուղի մոայլ ու դաժան իրականության նկարագիրը: Էգնատե Նինոշվիլու տեսած ու ապրած գյուղի պատկերն էր արտա-

¹ И. Гришашвили, Стихи, изд. «Правда», Москва, Библиотека «Огонек», № 21, 1951, стр. 7.

ցուլած գրողի երկերում: Բայց հիմա, վրաց սովետական բանաստեղծը՝ Իրակլի Արաշիձեն, այցելության գալով Նինոշվիլու ծննդավայրը, ահա ինչ է գրում:

Эгнате! Вот я в крае твоём,
Вот Чанчети, село знаменитое!
Из двух Грузий
Уж нету одной,
Что была нищетою измотана,
И омыта твоею слезой,
Есть другая, счастливая—вот она!¹

Դասակարգերի բաժանման և սոցիալական շերտավորման ողբերգությանը վերջ տված վրաց սովետական գյուղում Իրակլի Արաշիձեն, գնալով անցյալի և ներկայի ուժեղ հակադրությունների ճանապարհով, տեսնում է մարդու և գեղջուկի երկու ճակատագիր, երկու կյանք: «Գիտ Մրելաշվիլի» բանաստեղծության մեջ կոնկրետ մարդը, միևնույն հերոսը ներկայանում է մեզ հենց այդպես՝ մի կյանք, որ պատկանում է անցյալին, մի նոր կյանք, որ պատկանում է պայծառ ներկային: Հարյուրամյա Գիտն զառամյալ ծերունի է դարձել, բայց նա վկայություն է այն պայքարների, որ մղել է աշխատավոր գյուղացիությունն անցյալում՝ իր շահագործողների ու ցարիզմի դեմ, իսկ այժմ նույն Գիտն կոլտնտեսական է և աշխատում է երիտասարդական բրիգադում, երիտասարդների հետ ու աճեցնում է կոլտնտեսության հարուստ բերքը: Վերածնվել է Գիտն, հիմքից փոխվել է նրա կյանքը, նա վայելում է սոցիալիզմի բարիքները:

Իրակլի Արաշիձեն պատկանում է վրացական պոետների սովետական սերնդին, աճել ու պոետական հասակ է առել մեր տարիներին: Իրակլի Արաշիձեի սերունդն է այժմ, որ ստեղծագործության մեջ ակտիվ է, արտացոլում է գերազանցապես նոր, սոցիալիստական իրականությունը, շունի ոչինչ, որ կապի նրան անցյալի հետ, օժտված է խորապես ապրած նորի զգացումով: Իրակլի Արաշիձեի պոեզիան ծաղկելու մի արմատ ունի՝ մեր օրերը, մեր գաղափարները, մեր մեծ առօրյան է դա, որը հզորություն է տալիս նրա գրչին: Այս փաստն ինքնին իմաստավոր է և եթե դիտենք նույն երևույթը սովետական բոլոր ռեսպուբլիկաների կյանքում, որտեղ ստեղծագործողների սովետական սերունդն է այժմ տոն տալիս, ապա կարող ենք ասել, որ ներկայումս գեղարվեստական պոետական սրակտիկան հարստանում է ոչ միայն անցյալի տրագիգիաներով, որոնք զգալի դեր են խաղում, այլև հիմնականում հարստանում է սեփական, սովետական տրագիգիաներով, սեփական կուտակումներով: Մի նոր ակիքավորում է սա, որ բարձրանում է իր իսկ սեփական ուժով և մղում ստեղծագործական եռանդը գեպի առաջ՝ հիմք ունենալով նորի նոր արտահայտությունները:

Վրաց սովետական ամբողջ գրականության, ինչպես նաև պոեզիայի, այդ թվում և Իրակլի Արաշիձեի սերնդի ստեղծագործական կյանքում վրճ-

¹ Ираклий Абашидзе. Стихи о новой Грузии, из цикла «Песня жатвы». «Заря Востока», 1952, № 39.

ոական դեր խաղացին պարտիայի կենտրոնական կոմիտեի պատմական որոշումները իդեոլոգիական հարցերի մասին: Ջինված այդ որոշումներով, վրաց պոեզիան վճռական շրջադարձ կատարեց դեպի արդիականություն և հասավ ստեղծագործական ակնառու հաջողությունների: Այստեղ իր լուսման ունի պոետական նոր սերնդի ամելի երիտասարդ, մի այլ տաղանդավոր ներկայացուցիչը՝ Գրիգոլ Արաշիձեն: Առանձնապես խորն է զգում այս սերունդը իր հոգևոր կապը մեծ Հայրենիքի և ողբական կուլտուրայի հետ: Հիշեցնենք Գրիգոլ Արաշիձեի «Մոսկովյան գիշերներին» բանաստեղծությունը, ուր պոետը ներքոնեն միանշույթ է ողբական կուլտուրայի հետ վրաց բանաստեղծի ունեցած օրգանական առնչությունը: Բանաստեղծը եկել է Մոսկվա. գիշեր է, ձյունախառն քամի.

Сразу теплом окружила тбилисца
Многих детей неусыпная мать.
Братства, борьбы и победы столица—
Сила моя, утвержденья печать¹.

Դ. Արաշիձեի պոետական գործունեության ղեկավարող առաջին շրջանում սկիզբ առնող այս գիծը, վերջին տարիներին հասցնում է նրան գաղափարական-գրական խոշոր ընդհանրացումների և նվաճումների, սովետական հայրենասիրության վառ դրսևորման իր պոեզիայում:

Հայրենիքի պաշտպանության թեման վրաց պոեզիայում զգալի տեղ է բռնում: Վրաստանը, որպես սահմանամերձ ռեսպուբլիկա, պոեզիայում արտացոլվում է իրրև սովետական-սոցիալիստական երկիր՝ ի հակադրություն մարշալականացված, ստրկացված, թյուրքիայի: Գրիգոլ Արաշիձեն մի ամբողջ ժողովածու է ստեղծում, որտեղ շատ ցայտուն կերպով երևում է երկու սիստեմների հակադրությունը: Սովետական սոցիալիստական սիստեմում Վրաստանը հասել է ծաղկման ու երջանկության, իսկ Սարայի գետին այն կողմ ընկած երկիրը՝ դոլլարի կրնկի տակ և սեփական բռնակալների դաժան կեղեքման պայմաններում իրենից ներկայացնում է աղքատության ու ստրկության պատկեր: Տալով թյուրքիայի արյունոտ քաղաքական անցյալի հստակ բնութագրությունը, Գրիգոլ Արաշիձեն ներկայիս թյուրքիայի մասին այսպես է գրում.

Турецкие хурджины оскудели,
В чужие руки перешли клинки,
И в Турции хозяевами сели
Американские биржевики².

Հրապարակախոսական ուժեղ պաթոսի, հատուկ և հարվածող տողերով է գրել պոետը լկտի թշնամու մասին և ժողովրդի զգացմունքներն ու ատելությունն արտահայտելով նրա դեմ, արել է այս նախազգուշացումը.

¹ «Поэзия Грузии», ГИХЛ, 1949, Москва—Ленинград, стр. 353.

² Григор Абашидзе, На южной границе, стихи, изд. «Заря Востока» Тбилиси, 1949, стр. 12.

Поныне мы с Россией вместе,
И коль задумает опять
Наглец—аскер, забыв о чести,
Клинок на Грузию поднять,

Опять на поле встретит нас он
И примет смерть от тех людей,
Кто клятвой Сталинскою связан
Во славу Родины своей¹.

* * *

Վրաց սովետական պոեզիայում ժառանգության հարցը խոշոր տեղ է զբաղեցնում։ Չենք գտնի բանաստեղծական ոչ մի գիրք և ժողովածու, որտեղ պետեղված չլինեն կլասիկներին նվիրված երկեր։ Վրաց ժամանակակից պոետները ուշագիւր, տեղական և ջերմ վերաբերմունք են ցուցաբերում անցյալի գրական տրագիդիաների հանդեպ։ Անկախաբեկով անցյալի ժառանգության մասին Լենինի-Ստալինի ուսմունքով, ժամանակակից վրաց պոետները լայնորեն վերագնահատության են ենթարկում այդ ժառանգության առաջավոր մասը, գնահատում են ժողովրդին թանկ և հարազատ դեմոկրատական ներկայացուցիչներին և գեղարվեստորեն իմաստավորում նրանց գործն ու նշանակությունը։

Առավել ուժեղ է հնչում Վրաց երգի արքա՝ Շոթա Ռուսթավելու ներկայությունը վրաց սովետական պոեզիայում։ Նա մտել է վերջինիս մեջ իրրև նվիրական անուն ու հիշատակվում է որպես խոսքի հանճարեղ վարպետ։ Ռուսթավելին պետական ներշնչման աղբյուր է բազմաթիվ բանաստեղծների համար։ Ավելին. նրա թեմատիկ խոսքերն ու աֆորիզմները բնականոն կերպով հյուսվում են ժամանակակից բանաստեղծների տողերին։ Ռուսթավելին կենդանի է, ինչպես երբեք։ Վրաց ժողովրդի ինքնագիտակցության և ինքնաճանաչողության հզորագույն դեմքերից է նա, որ եղբայրության, հումանիզմի, անձնվիրության, հայրենասիրության զգացմունքներ ու գաղափարներ է տալիս վրաց բանաստեղծությանը և ապրում որպես ուսուցիչ և ժողովրդի մեծագույն բարեկամ։

18-րդ դարի վրաց հայտնի բանաստեղծ Դավիթ Գուրամիշվիլին իր կյանքով ու ստեղծագործությամբ դառնում է արդի վրաց պոեզիայի էպիկական պատկերման նյութը։ Չիքովանու՝ Ստալինյան մրցանակի արժանացած Շերգ Դավիթ Գուրամիշվիլու մասին պոեմը՝ զրա ապացույցն է։ Ե՛վ այս պոեմի հեղինակը, և՛ այլ բանաստեղծներ, որոնք գրել են Գուրամիշվիլու մասին, ընդգծել, խորապես իմաստավորել են, պատկերել Ռուսաստանի, Ուկրաինայի և Վրաստանի պատմական ուղիները, նրանց ժողովուրդների սրտերի միասնությունը, ընդհանուր թշնամիների դեմ նրանց թխաված արգար արյան՝ արգասավորությունը նոր սերունդների կյանքի ու պայծառ ապագայի համար։

Ժողովրդին հատուկ մտերիմ զգացմունքներով են գրում վրաց պոետները Նիկոլոզ Բարաթաշվիլու, Իլիա Ծավճավաձեի ու Ակակի Ծերեթելու մասին։ Առաջինն իր ողբերգական կյանքով, բայց և հերոսական ոճի

¹ «Поэзия Грузии», ГИХЛ, 1949, Москва—Ленинград, стр. 28—29.

ու փիլիսոփայական խորությամբ պոեզիայով, Ճավճավաձեն ու Ծերեթելին, որպես ազգային-ազատագրության մեծ բանաստեղծներ՝ արդի վրաց պոեզիայի մեջ ներկայացվում են իրրև երկրի ու ժողովրդի երջանկության համար մաքառած դեմքեր, կուլտուրայի անմար տրագիցիաներ՝ ստեղծողներ։ Բնորոշ է Սանդրո Էռլու «Խլիա Ճավճավաձեի գերեզմանի վրա» բանաստեղծությունը, ուր ժամանակակից պոետը պատմում է, թե ինչու՞ է ավարտվել դաժան անցյալում մեծ բանաստեղծի կողմից մղված պայքարը և որ նրա հայրենիքը այժմ, «Հոկտեմբերի ալ դրոշի ներքո» երջանկության ծիածան է կապել։

* * *

Վրաց սովետական պոեզիան իր ժողովրդին տանում է ռոտայինյան դարաշրջանի վեհ և բարձր մտքերն ու գաղափարները։ Ինչպես սովետական ամբողջ պոեզիան, այնպես էլ վրացականը, արտահայտում է ժողովուրդների ամենանվիրական զգացմունքները, ստալինյան բարեկամության զգացմունքները։ Մերտի բոլոր թրթռումներով ու հոգու ամբողջ ուժով է հնչում սրբազան եղբայրության ու հավերժական բարեկամության մոտիվը։ Բնք՝ այդ մոտիվի արդեն նորանոր բանաստեղծներ է ծնում և մղում նրանց երգելու ժողովուրդների անքակտելի դաշինքն ու եղբայրությունը։ Մեր օրերին, ինչպես երբեք, բանաստեղծի ճշմարիտ ժողովրդայնության հիմքը ժողովուրդների եղբայրության քարոզն է։

Վրաց սովետական պոեզիայում վաղուց է ինչ, հնչում է ժողովուրդների եղբայրության երգը։ Այն ծնվել է Հոկտեմբերյան Մեծ ուժեղացիային նվիրված երգերի հետ։ Լենինին և Ստալինին նվիրված ստեղծագործություններում վրաց պոետները գեղարվեստական մարմնավորում են տվել ժողովուրդների եղբայրության գաղափարին և երգել նրանց միասնական մեծ առօրյան։

Նոր Ռուսաստանի գովքը կարգացող վրաց պոետը հրաժեշտ է կարդում հին Ռուսաստանին և հին Վրաստանին։ Նոր Վրաստանի երգասանը նոր Ռուսաստանի շնորհիվ է ստացել իր օջախը։ Ժողովուրդների միասնական ընտանիքում ապրելու զգացմունքն է սա, նորի զգացում։ Համապատասխանորեն նոր իմաստ է տրվում անցյալի լավագույն տրագիցիաներին։ Վրացական սովետական պոեզիայում նույնքան բնական երևույթ է Պուշկինի, Նեկրասովի, Շելլենկովի, Զամբուլի, Թումանյանի մեծարումը, որքան բնական երևույթ է Ճավճավաձեի ու Ծերեթելու մեծարումը։ Բայց այս անունները միայն բանաստեղծների անուններ չեն։ Վրաց պոետների ուժը հենց այն է, որ նրանց երկերում հանդես եկող ամեն մի բարձր անուն բերում է նրա ժողովրդի ու երկրի անցյալի ու ներկայի, նրա ազատարար ղեկավարների ու պայծառ ապագայի երազների իմաստավորումը։ Այդպիսով, վրաց ազգային սովետական պոեզիայում անդրագարծվում են եղբայրական ժողովուրդների պատմության նշանակալից դրվագները, նրանց բնորոշ հատկանիշները։

Ինտերնացիոնալիզմը վրացական պոետների ստեղծագործության մեջ արտահայտվում է Սովետական Ռուսաստանին, Ուկրաինային, Բելոռուսիային, Ուզբեկստանին, Ադրբեյջանին, Հայաստանին նվիրված երկերում։ Ազգային սովետական ռեսպուբլիկաներում ձեռք բերված վիթխարի նվա-

ճումները, այդ երկրները ու ժողովուրդները վերածննդի պոետական մեծարժեքը վրաց բանաստեղծների մոտ ընդհանուր հպարտության զգացումներ է արթնացնում: Սովետական հայրենասիրության գաղափարը վրաց պոեզիայում դրսևորվում է իբրև ամբողջ Սովետական Միության և նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդներին խանդավառող գաղափար:

Բնական է և այն, որ անդրկովկասյան ժողովուրդների անցյալի և ներկայի թեման արդի վրացական պոեզիայում զգալի տեղ է բռնում: Գեորգի Լեոնիձեի բանաստեղծական հոյակապ տողերում հառնում է Ադըրբեջանի և Վրաստանի անցյալի տխրալի պատկերը, բայց և նոր ծնունդ առած Անդրկովկասյան ժողովուրդների պայքարի ուղին, նրանց նոր կյանքի երջանկալի կերպարը: Ս. Էնուու «Հայաստանի գրողներին» բանաստեղծության մեջ կա այն հավաստիացումը, որ վրաց և հայ գրողներին այրել է նույն ցափն ու վիշտը, բայց դա անցել է պատմության գիրկը: Մենք, ասում է պոետը, չէինք մոռացել Հովհաննեսի (Թումանյանի) պատվիրանները բարեկամության ու սիրո մասին: Անցել է հին, մոռյվ ժամանակը, եկել է նոր դարաշրջան, մենք միասին պահում ենք նոր Հայաստանի ազատ դրոշմը:

Վրաց պոեզիայում հիանալի դրսևորում ունի հայ և վրաց ժողովուրդների եղբայրության գաղափարը՝ կապված Սայաթ-Նովայի ու Թումանյանի հետ: Դրիշաշվիլին, Աբսղելին, Նոնեշվիլին և այլ պոետներ ամենաջերմ կերպով են երգել այդ անունները, իբրև երկու ժողովուրդների եղբայրության մարմնավորումներ:

Ալեքսանդրե Աբաշելին Հովհաննես Թումանյանին նվիրված տողերում ըմ մտերմությամբ է երգում նրան.

Ելբիլո օջանես! Մենի սախելի
 քարտულ սալամբուրս շեղ ափրիա.
 Մեն իցենի ցոմնոծիս Խար ամսախելի,
 Մենի սիմլեոս իցենց ցեմլեոս.¹

Բնական, սրտառու, գեղեցիկ արտահայտություն է գտել վրաց և հայ ժողովուրդների դարավոր եղբայրությունը նույն Ալեքսանդրե Աբաշելու «Հայաստանին» բանաստեղծության մեջ.

Թող բոցավառվի՝ ի մահ թշնամու
 Մեր եղբայրության շողջողուն արփին,
 Թող հավերժ ապրեն սիրով իրարու
 Հայոս և Կարթլոս եղբայրներն անգին²:

Ինչպես ամբողջ ժողովուրդը և նրա գուսանները, այնպես էլ վրաց պոետները լծված են հանուն խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի մղվող պայքարին: Վերջին շրջանի գործերը լի են այդ զգացմունքներով:

Սովետական մարդկանց նվիրական այդ զգացմունքներն է արտահայտել վրաց բանաստեղծը խաղաղության մեծ գրոշակակիր Ստալինին ընծայված ստեղծագործության մեջ:

¹ Վաղվանդրե Զաքարյան, «Վրացական պոեզիա», Սաքխուտա Մցքրալու, Թբիլիսի, 1950, էջ 91:

² «Գրական թերթ», 1952 թ., № 7:

Опять нас пугают грозой военной,
В железные трубы трубя.
Ты, Сталин, надежда и счастье вселенной,
Все страны глядят на тебя!

Отец и учитель трудящихся мира,
Строитель счастливой страны,
Ты, Сталин, хранитель всеобщего мира,—
Нет, мы не страшимся войны!¹

Վրաց սովետական պոեզիան, համատարիմ ժողովրդի տրամադրություններին ու հույզերին, նրա կամքին ու իդեալներին, քարոզում է արդիականության մեծ գաղափարներ—խաղաղության հաղթանակի, կոմունիզմի հաղթանակի գաղափարները:

¹ Григол Абашидзе. На южной границе, изд. „Заря Востока“, Тбилиси, 1949, стр. 30—31.